# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՍԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ ԵՎ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» օգոստոս 2013 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Լիազոր մարմին) և «ՍԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Կազմակերպիչ, իսկ Լիազոր մարմինը և Կազմակերպչին միասին հիշատակելու դեպքում՝ Կողմեր), հիմք ընդունելով «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ 785-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 5-րդ կետը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

# ДОГОВОР

## МЕЖДУ МИНИСТЕРСТВОМ ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ЗАКРЫТЫМ АКЦИОНЕРНЫМ ОБЩЕСТВОМ «СИТРОНИКС АРМЕНИЯ» ОБ ОРГАНИЗАЦИИ СВОБОДНОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ЗОНЫ НА ТЕРРИТОРИИ ЗАО «РАО МАРС» И ЗАО «ЕрНИИММ»

г. Ереван «14» августа 2013 г.

Министерство экономики Республики Армения (далее: «Уполномоченный орган») и закрытое акционерное общество «СИТРОНИКС АРМЕНИЯ» (далее: «Организатор», а в дальнейшем совместно именуются «Стороны»), руководствуясь частью 1 статьи 7 Закона Республики Армения «О свободных экономических зонах» и пунктом 5 Постановления от 18 июля 2013 года № 785-А (далее: «Постановление») Правительства Республики Армения (далее: «Правительство»), заключили настоящий договор (далее: «Договор») о нижеследующем:

## Հոդված 1.
## Հիմնական հասկացություններ

Պայմանագրում կիրառվող հասկացությունները բխում են ազատ տնտեսական գոտիների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից:

Սույն պայմանագրում կիրառվող հիմնական հասկացություններն են՝

1. Ազատ տնտեսական գոտիների մասին օրենսդրություն՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, դրանից բխող ենթաօրենսդրական ակտերը և ազատ տնտեսական գոտիների գործունեությանն առնչվող հարկային օրենսդրություն:
2. Ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ՝ ազատ տնտեսական գոտու կազմակերպման նպատակով կառավարության որոշմամբ ընտրված իրավաբանական անձ, որն ապահովում է ազատ տնտեսական գոտում գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը և ծառայությունների մատուցումը:
3. Ազատ տնտեսական գոտու շահագործող (այսուհետ՝ Շահագործող)՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան բացառապես ազատ տնտեսական գոտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետությունում գրանցված

## Статья 1.
## Основные понятия

Понятия, используемые в Договоре, вытекают из законодательства Республики Армения о свободных экономических зонах.

В настоящем договоре используются следующие основные понятия:

1. Законодательство о свободных экономических зонах: закон Республики Армения «О свободных экономических зонах» и его подзаконные акты; налоговое законодательство, связанное с деятельностью свободных экономических зон.
2. Организатор свободной экономической зоны: выбранное решением Правительства юридическое лицо для управления свободной экономической зоной, которое обеспечивает создание необходимой инфраструктуры и предоставление услуг для деятельности в свободной экономической зоне.
3. Субъект, эксплуатирующий свободную экономическую зону (далее: «Резидент СЭЗ»): зарегистрированное в Республике Армения коммерческое юридическое лицо, частный предприниматель, а также представительство зарубежной организации, занимающееся предпринимательской деятельностью исключительно на территории свободной экономической

առևտրային իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև օտարերկրյա կազմակերպության ներկայացուցչություն, որն ունի Կառավարության կողմից տրված համապատասխան թույլտվություն և կազմակերպչի հետ կնքված համապատասխան պայմանագիր:

4. Գործարար ծրագիր՝ Որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված գործարար ծրագիրը:
5. Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 դեկտեմբերի 23-ի թիվ 1247-Ա որոշմամբ ստեղծված Մասնավոր նախաձեռնությամբ ազատ տնտեսական գոտի ստեղծելու համար հայտը գնահատող միջգերատեսչական հանձնաժողով:

зоны в соответствии с Законом Республики Армения «О свободных экономических зонах», которое имеет разрешение со стороны Правительства и подписанный соответствующий договор с Организатором.

4. Бизнес - план: Бизнес - план, утвержденный подпунктом 2 пункта 4 Постановления.
5. Комиссия: межведомственная комиссия, созданная постановлением Премьер-министра Республики Армения от 23 декабря 2011 года № 1247-А с целью оценки заявок на создание свободной экономической зоны по частной инициативе.

## Հոդված 2.
## Հիմնական դրույթներ

1. Պայմանագրի առարկա են հանդիսանում Որոշման 1-ին կետով «ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵրՄՄԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությունների տարածքներում ստեղծված ազատ տնտեսական գոտու (այսուհետ՝ ԱՏԳ)՝ կազմակերպման, ԱՏԳ ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման, Կազմակերպչի կողմից ծառայությունների մատուցման, այդ ծառայությունների սակագների սահմանման, ներդրումների իրականացման, ԱՏԳ Շահագործողների ներգրավման, Լիազոր մարմնի կողմից

## Статья 2.
## Основные положения

1. Предметом Договора являются правовые отношения, возникающие в связи с организацией свободной экономической зоны (далее: СЭЗ), созданной на территории закрытых акционерных обществ «РАО МАРС» и «ЕрНИИММ» в соответствии с пунктом 1 Постановления; созданием и развитием инфраструктур СЭЗ; предоставлением услуг со стороны Организатора и установлением тарифов на указанные услуги; осуществлением инвестиций; привлечением резидентов СЭЗ; надзором, осуществляемым со стороны Уполномоченного органа, а

վերահսկողության իրականացման արդյունքում առաջացող և ԱՏԳ գործունեության հետ կապված այլ իրավահարաբերությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն:

2. ԱՏԳ գործառնական տեսակն է արտադրաարդյունաբերական և տեխնիկակիրառական՝ էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության ((տվյալների) ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներում՝ «ՌԱՕ ՄԱՐՍ» փակ բաժնետիրական ընկերության տարածքի համար, իսկ «ԵրՄՄԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության տարածքի համար՝ տեխնիկակիրառական էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղոր-դակցության ((տվյալների) ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներն սպասարկող գիտական հետազոտություններ և մշակումներ, փորձարարակոնստրուկտորական աշխատանքներ ոլորտներում:

также другие правовые отношения, связанные с деятельностью СЭЗ согласно законодательству Республики Армения.

2. Функциональный тип СЭЗ определяется как производственно-промышленный и технико-внедренческий: для территории закрытого акционерного общества «РАО МАРС» - в таких отраслях, как электроника, точная инженерия, фармацевтика и биотехнология, информационные технологии, альтернативная энергетика, производственный дизайн и телекоммуникации (разработка и производство технологического оборудования, систем и материалов для передачи информации (данных)), а для территории закрытого акционерного общества «ЕрНИИММ» - в сфере научных исследований и разработок, а также экспериментально-конструкторских работ, обслуживающих такие отрасли, как технико-прикладная электроника, точная инженерия, фармацевтика и биотехнология, информационные технологии, альтернативная энергетика, производственный дизайн и телекоммуникации (разработка и производство технологического оборудования, систем и материалов для передачи информации (данных)).

3. Другие виды деятельности в СЭЗ,

3. ԱՏԳ-ում Կառավարության որոշմամբ սահմանված գործունեության տեսակներից բացի այլ գործունեության տեսակներ կարող են իրականացնել միայն Շահագործող չհանդիսացող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: Շահագործող չհանդիսացող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ-ում իրականացվող գործունեությունը չի համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս իրականացվող գործունեություն: Կազմակերպիչը ԱՏԳ-ում Շահագործողներին տրամադրված թույլտվությամբ չսահմանված գործունեության իրականացման բացահայտման դեպքում անմիջապես տեղեկացնում է Լիազոր մարմնին:
4. ԱՏԳ կազմակերպման գործունեությունն իրականացվում է Կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» թիվ 1769-Ա որոշմամբ հաստատված կորպորատիվ կառավարման սկզբունքների համաձայն:
5. Կազմակերպիչը պարտավոր է պոտենցիալ Շահագործողին տրամադրել տեղեկանք ԱՏԳ-ում գործունեության պայմանների, մատուցվող ծառայությունների, դրանց սակագների վերաբերյալ, ինչպես նաև ԱՏԳ-ի գործունեությանն առնչվող այլ անհարժեշտ տեղեկատվություն:

помимо видов деятельности, установленных постановлением Правительства, могут осуществляться со стороны юридических лиц и частных предпринимателей, не являющихся Резидентами СЭЗ. Деятельность, осуществляемая в СЭЗ юридическими лицами и частными предпринимателями, не являющимися Резидентами СЭЗ, не считается деятельностью, осуществляемой вне таможенной границы Республики Армения. В случае, если Организатору станет известно об осуществлении в СЭЗ вида деятельности, не установленного выданным разрешением, он должен незамедлительно уведомить об этом Уполномоченный орган.
4. Деятельность по организации СЭЗ осуществляется в соответствии с принципами корпоративного управления, утверждёнными Постановлением Правительства от 30 декабря 2010 года № 1769-А «О принятии кодекса корпоративного управления Республики Армения».
5. Организатор обязан предоставить потенциальному Резиденту СЭЗ справку об условиях деятельности в СЭЗ, оказываемых услугах и их тарифах, а также другую информацию, связанную с функционированием СЭЗ.
6. Справка предоставляется в течение 5

6. Տեղեկանքը տրամադրվում է պոտենցիալ Շահագործողի դիմելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում:
7. Կազմակերպիչը պարտավոր է Շահագործողի կողմից թույլտվություն ստանալուց հետո 3 ամսվա ընթացքում վերջինիս հետ կնքել պայմանագիր:

рабочих дней с момента обращения потенциального Резидента СЭЗ.
7. Организатор обязан заключить договор с Резидентом СЭЗ в течение 3 месяцев с момента получения им разрешения на осуществление деятельности в СЭЗ.

## Հոդված 3.
## ԱՏԳ գործունեության պայմաններ

## Статья 3.
## Необходимые условия деятельности СЭЗ

1. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, այդ թվում՝

1.1 ԱՏԳ սահմանազատումը՝ Կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1521-Ն որոշմամբ հաստատված՝ սահմանագծին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան: ԱՏԳ սահմանագծին ներկայացվող տեխնիկական պահանջները ներկայացված են Պայմանագրի Հավելված 4-ով:

1.1.1 Հավելված 4-ի 11-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված նվազագույնը 150 տոննա կշռելու հնարավորություն ունեցող կշեռքի վերաբերյալ դրույթը կգործի միայն երկաթգծի առկայության դեպքում:

1.2 Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային հսկողություն և մաքսային

1. Организатор обязан обеспечить выполнение требований части 1 статьи 6 закона Республики Армения «О свободных экономических зонах», в том числе:

1.1 Отделение СЭЗ границей, соответствующей техническим требованиям к пограничной линии, утверждённым Постановлением Правительства от 13 октября 2011 года № 1521-Н. Требования, предъявляемые к пограничной линии СЭЗ, представлены в Приложении 4 Договора.

1.1.1 Определенное подпунктом 5 пункта 11 Приложения 4 положение о весах с возможностью взвешивать минимум 150 тонн будет действовать только при наличии железной дороги.

1.2 Необходимые условия для осуществления таможенного контроля и таможенного оформления должностными лицами таможенных

ձևակերպումներ իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ, այդ թվում.

1.2.1 Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների պահանջներին համապատասխանող և ժամանակակից սարքավորումներով հագեցված մաքսային տերմինալ,

1.2.2 մաքսային կետ,

1.2.3 ավտոմեքենաների հսկիչ-անցագրային կետեր,

1.2.4 բեռնատար և թեթև ավտոտրանսպորտի մանրակրկիտ զննման վայր 120 քառակուսի մետր մակերեսով,

1.2.5 տրանսպորտային միջոցների զննության համար փոսորակներով և հարթակներով հագեցված և ծածկված տարածք 120 քառակուսի մետր մակերեսով,

1.2.6 կոնտեյներային հրապարակ 1000 քառակուսի մետր մակերեսով՝ ընդլայնման իրավունքով,

1.2.7 մաքսային մարմինների պատասխանատու պահպանության համար փակ տարածք պահեստ 1490 քառակուսի մետր մակերեսով՝ ընդլայնման իրավունքով,

1.2.8 ավտոկանգառ 900 քառակուսի մետր մակերեսով:

1.3 ԱՏԳ տարածքում ապրանքների ազատ տեղաշարժման հնարավորություն:

1.4 Բեռնափոխադրումների համար նախատեսված տրանսպորտային

органов, включая:

1.2.1 таможенный терминал, оснащённый современным оборудованием и соответствующий требованиям таможенных органов Республики Армения;

1.2.2 таможенный пункт;

1.2.3 контрольно-пропускные пункты для автомобилей;

1.2.4 помещение (ангар) для тщательного осмотра грузового и легкового автотранспорта площадью 120 кв.м;

1.2.5 территорию площадью 120 кв.м для котлованов и платформ для осмотра транспортных средств;

1.2.6 контейнерную площадку площадью 1000 кв.м с правом расширения,

1.2.7 таможенный склад (склад для ответственного хранения) площадью 1490 кв.м с правом расширения,

1.2.8 автостоянку, площадью 900 кв.м

1.3 Возможность свободного перемещения товаров на всей территории СЭЗ.

1.4 Автостоянкой для транспортных средств, предназначенных для грузоперевозок, площадью в 1000 кв.м.

1.5 Предоставление материально-

միջոցների ավտոկայանատեղի 1000 քառակուսի մետր մակերեսով:

1.5 Ապրանքների պահպանության համար նյութատեխնիկական սարքավորումներ, ինչպես նաև բեռնման, բեռնաթափման և տրանսպորտային միջոցներ, պահեստային տնտեսության համար անհրաժեշտ սարքավորումներ, կապի միջոցներ:

1.6 Լոգիստիկ ենթակառուցվածք, այդ թվում ապահովել.

1.6.1 Կոնտեյներների պահպանման հնարավորություն հատուկ կոնտեյներային տարածքներում (շինություններում),

1.6.2 Բեռների պահպանման հնարավորություն հաստատված (սահմանված) ջերմաստիճանի ռեժիմներով և բաց տարածքներում,

1.6.3 Բեռների, կոնտեյներների ընդունման և բեռնաթափման հնարավորություն ավտոմոբիլային տրանսպորտի մեջ,

1.6.4 Ապրանքի հսկողության, հաշվառման և ներպահեստային տեղաշարժման հնարավորություն,

1.7 ԱՏԳ տարածքը անվտանգության, առաջնային բուժօգնության և հակահրդեհային համակարգերով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն:

1.8 Անխափան ջրամատակարարում և

технического оборудования для хранения товаров, а также транспортные средства для погрузки и разгрузки товаров, оборудование, необходимое для складского хозяйства, средства связи.

1.6 Логистической инфраструктурой, в том числе обеспечить:

1.6.1 возможность хранения контейнеров в специальных контейнерных помещениях (сооружениях);

1.6.2 возможность хранения грузов при утвержденных (установленных) температурных режимах и на открытых площадках;

1.6.3 возможность приёма и разгрузки грузов и контейнеров на автомобильный транспорт;

1.6.4 возможность контроля, учёта и внутрискладского перемещения товаров.

1.7 Функционирование на территории СЭЗ систем безопасности, первой медицинской помощи и противопожарной системы, соответствующих требованиям законодательства Республики Армения.

1.8 Бесперебойное водоснабжение и водоотвод, энергоснабжение, газоснабжение, мусороудаление и связь на территории СЭЗ.

ջրահեռացում, էներգամատակարարում, գազամատակարարում, աղբահանություն և կապ ԱՏԳ տարածքում:

1.9 Սանիտարահիգիենիկ նորմերի պահանջների պահպանումը և վերահսկողությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն:

1.10 Կարանտինային սպասարկման տարածքի առկայությունը:

2. Կազմակերպիչը պարտավոր է ներկայացնել ԱՏԳ տարածքում կառուցվելիք շինությունների և ենթակառուցվածքների տեղաբաշխվածությունը հատակագծով:

3. Կազմակերպիչը պարտավոր է սահմանել ԱՏԳ-ի անվտանգության ներքին կանոնների սկզբունքները:

4. Կազմակերպիչը պարտավոր է սահմանել և հրապարակել ԱՏԳ-ի շահագործման կանոնները:

5. Կազմակերպիչը պարտավոր է ստեղծել ԱՏԳ լոգոտիպ:

6. Կազմակերպիչը պարտավոր է իր սեփականատիրոջից ստանալ գրավոր հավաստիացում առ այն, որ Կազմակերպչի սնանկ ճանաչվելու կամ ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված կարգով Կազմակերպչի հետ պայմանագրի լուծարման դեպքում, մեկ ամսվա ընթացքում կներկայացվի այլ Կազմակերպիչ ԱՏԳ գործունեության անխափանությունն ապահովելու նպատակով, իսկ նոր Կազմակերպիչ չներկայացնելու դեպքում՝ ԱՏԳ

1.9 Выполнение и надзор санитарно-гигиенических норм согласно требованиям законодательства Республики Армения.

1.10 Наличие территории для карантинного обслуживания.

2. Организатор обязан представить план (схему) с указанием размещения зданий и инфраструктуры на территории СЭЗ.

3. Организатор обязан определить принципы внутренних правил безопасности СЭЗ.

4. Организатор обязан утвердить и опубликовать правила эксплуатации СЭЗ.

5. Организатор обязан разработать логотип СЭЗ.

6. Организатор обязан получить от своего собственника письменную гарантию о том, что в случае объявления Организатора банкротом или при расторжении с Организатором договора в порядке, определенном законодательством о СЭЗ, в течение месяца будет представлен другой Организатор для обеспечения непрерывности функционирования СЭЗ, а в случае, если другой Организатор не будет представлен, территория СЭЗ на тех же условиях будет предоставлена компании, признанной

տարածքը նույն պայմաններով կտրամադրվի Կառավարության կողմից ԱՏԳ կազմակերպչի ընտրության համար հայտարարված մրցույթի արդյունքում Կազմակերպիչ ճանաչված համապատասխան կազմակերպությանը:

Организатором, по результатам конкурса о выборе Организатора СЭЗ, объявленного Правительством.

**Հոդված 4.**
**Կազմակերպչի կողմից ապահովվող ներդրումները**

1. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել համապատասխան ներդրումներ Գործարար ծրագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում՝ ըստ Հավելված 2-ի:
2. Հավելված 2-ում նշված ներդրումների ծավալները դրամական արտահայտությամբ կրում են ինդիկատիվ բնույթ և կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով ընթացիկ շուկայական և մակրոտնտեսական իրավիճակը: Փաստացի ներդրումների շեղումը պլանավորված ներդրումներից կիսամյակի կտրվածքով չի կարող գերազանցել 40% և պետք է լինի փաստաթղթերով հիմնավորված:
3. Կազմակերպիչն ընթացիկ կիսամյակից մեկ ամիս առաջ համաձայնեցնում է Գործարար ծրագրով նախատեսված միջոցառումների ծախսերի ընդհանուր նախահաշիվը Լիազոր մարմնի հետ: Կիսամյակի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում

**Статья 4.**
**Обеспечиваемые Организатором инвестиции**

1. Организатор обязан обеспечить осуществление соответствующих инвестиций в размерах и сроках, предусмотренных бизнес программой, в соответствии с Приложением 2.
2. Объемы инвестиций в денежном выражении, указанные в Приложении 2, носят индикативный характер и могут корректироваться с учетом текущей рыночной и макроэкономической ситуации. Отклонения фактических инвестиций от запланированных, не могут превышать 40% по итогам полугодия и должны быть подтверждены документально.
3. Организатор за месяц до текущего полугодия согласовывает общую смету затрат по мероприятиям, зафиксированным в бизнес программе, с Уполномоченным органом. Организатор в течение 15 рабочих дней после окончания полугодия предоставляет Уполномоченному

Կազմակերպիչը Լիազոր մարմին է ներկայացնում տեղեկատվություն (այդ թվում՝ փաստաթղթային հիմնավորում) Պայմանագրի ստորագրման պահից փաստացի ներդրումների (ծախսերի) վերաբերյալ՝ ծախսերի ընդհանուր նախահաշվին համապատասխան:

4. Ծախսերի ընդհանուր նախահաշվի մեջ չներառված ներդրումները չեն կարող փոխարինել Պայմանագրով սահմանված պարտադիր կատարման ենթակա ներդրումներին:

5. ԱՏԳ գործունեության ողջ ժամանակահատվածի ընթացքում Կազմակերպիչը պարտավոր է յուրաքանչյուր շահագործողի և ԱՏԳ այլ սուբյեկտների համար ապահովել որակյալ ինժեներատեխնիկական ենթակառուցվածքի առկայությունը, այդ թվում՝ անխափան էլեկտրա-մատակարարում, նախատեսելով այլընտրանքային սնուցման հնարա-վորություն, գազամատակարարում, ջրամատակարարում և ջրահեռացում, աղբահանություն, հեռահաղորդակ-ցություն, ինտերնետային կապ:

6. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել ԱՏԳ տարածքի հասարակական սպասարկման ենթակառուցվածքի առկայությունը:

органу информацию (в том числе документальное подтверждение) по фактическим инвестициям (затратам) с момента подписания Договора, в соответствии с общей сметой затрат.

4. Инвестиции, не включенные в общую смету затрат, не могут заменить установленные Договором и обязательные к осуществлению инвестиции.

5. На протяжении всего срока функционирования СЭЗ Организатор обязан обеспечить каждого Резидента СЭЗ и другие субъекты СЭЗ качественной инженерно-технической инфраструктурой, включая бесперебойное энергоснабжение с наличием альтернативного источника питания, газоснабжение, водоснабжение и водоотвод, мусороудаление, телекоммуникации, интернет связь.

6. Организатор обязан обеспечить наличие на территории СЭЗ инфраструктуры общественного обслуживания.

**Հոդված 5.**

**Статья 5.**

**Կազմակերպչի կողմից մատուցվող ծառայությունները և դրանց սակագները**

1. Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Կազմակերպիչը պարտավորվում է «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ բազայի վրա ստեղծված ԱՏԳ-ի տարածքում մատուցել Գործարար ծրագրով նախատեսված ծառայությունները՝ ըստ հավելված 1-ով նախատեսված ցանկի:
2. Մատուցվող ծառայությունների համար Կազմակերպչի կողմից սահմանվող սակագները և դրանց որոշման բանաձևերը համաձայնեցվում են Լիազոր մարմնի հետ:
3. Կազմակերպիչը կարող է վերանայել իր կողմից մատուցվող ծառայությունների սակագները՝ համաձայնեցնելով փոփոխությունները Լիազոր մարմնի հետ:
4. Կազմակերպիչը վարձակալությամբ տրամադրում է տարածքներ.

   4.1 «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի տարածքում.

   - 55.799 քառակուսի մետր մակերեսով արտադրատնտեսական տարածքներ,
   - 10.908 քառակուսի մետր մակերեսով գրասենյակային տարածքներ:

   4.2 «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում՝

**Услуги, предоставляемые Организатором, и их тарифы**

1. В течение срока действия Договора Организатор обязуется предоставлять услуги, предусмотренные списком в Приложении 1, на территории СЭЗ, созданной на базе ЗАО «РАО МАРС» и ЗАО «ЕрНИИММ».
2. Тарифы на услуги, устанавливаемые Организатором, и формулы их расчёта согласовываются с Уполномоченным органом.
3. Организатор имеет право пересматривать тарифы на предоставляемые им услуги, согласовывая изменения с Уполномоченным органом.
4. Организатор сдаёт в аренду територии:

   4.1 На территории ЗАО «РАО МАРС»:

   - производственно-хозяйственные помещения площадью 55 799 кв.м;
   - офисные помещения площадью 10 908 кв.м.

   4.2 На территории ЗАО «ЕрНИИММ»: офисные помещения площадью 27

27.060,4 քառակուսի մետր մակերեսով գրասենյակային տարածքներ:

060,4 кв.м.

## Հոդված 6.
## ԱՏԳ շահագործողների ներգրավումը, մարքեթինգ

1. Կազմակերպիչը պարտավոր է իրականացնել Շահագործողներին ԱՏԳ ներգրավման ուղղությամբ միջոցառումներ, որոնց տարեկան պլանը ներկայացվում է Լիազոր մարմնին:
2. Կազմակերպիչը պարտավոր է ներգրավել բրենդային և պրոֆիլային Շահագործողների՝ համաձայն հավելված 3-ի:
3. Կազմակերպիչն պարտավոր է իրականացնել մարքեթինգային ծրագիր, այդ թվում.
   3.1 Իրականացնել կազմակերպությունների և դրանց հիմնական պրոֆիլի ուսումնասիրություն,
   3.2 իրականացնել հայկական սփյուռքի ներկայացուցիչների (այդ թվում՝ այդպիսի կորպորացիաների բարձրաստիճան ղեկավարների) միջոցով ճյուղային կազմակերպությունների հետ աշխատանքի հնարավորությունների ուսումնասիրություն,
   3.3 կազմել բանակցություններում հետաքրքրված կազմակերպությունների կարճ

## Статья 6.
## Привлечение Резидентов СЭЗ, маркетинг

1. Организатор обязан осуществлять мероприятия по привлечению Резидентов в СЭЗ. План мероприятий на год представляется Уполномоченному органу.
2. Организатор обязан привлекать брендовых и профильных Резидентов согласно Приложению 3.
3. Организатор обязан реализовать маркетинговую программу, в том числе:
   3.1 осуществить изучение организаций и их основного профиля;
   3.2 изучить возможности работы с отраслевыми организациями через представителей армянской диаспоры (в том числе руководителей высшего звена соответствующих корпораций);
   3.3 составить краткий список компаний, заинтересованных в проведении переговоров;
   3.4 провести бизнес-форумы за рубежом;

ցուցակը,

3.4 անցկացնել գործարար համաժողովներ արտասահմանյան երկրներում,

3.5 հաստատել կապեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անմիջականորեն և հասցեագրված ներդրումային աշխատաժողովներում մասնակցության ընթացքում և այլ միջոցներով,

3.6 տեղեկացնել Շահագործողներին հետաքրքրություն ներկայացնող արտահանման շուկաների, այդ թվում՝ արտահանման պայմանների մասին,

3.7 աջակցել հիմնական միջազգային ցուցահանդեսներում հայկական Շահագործող-կազմակերպությունների մասնակցությանը,

3.8 աջակցել հայկական Շահագործող-կազմակերպությունների արտադրանքի և ծառայությունների առաջխաղացմանը:

3.9 ստեղծել ԱՏԳ վերաբերյալ մասնագիտացված մշտապես թարմացվող կայք:

3.10 իրականացնել հանրային իրազեկման (PR) լայնամաշտաբ ակցիաների անցկացում, այդ թվում՝ օտարերկրյա ԶԼՄ-ներում:

3.11 Իրականացնել ԱՏԳ-ի միջազգային ճանաչմանը և

3.5 установить связи с представителями организаций – напрямую и опосредованно, через участие в адресных инвестиционных семинарах и другими способами;

3.6 информировать Резидентов СЭЗ о представляющих для них интерес экспортных рынках, в том числе об условиях экспорта;

3.7 содействовать участию армянских организаций-резидентов СЭЗ, в основных международных выставках;

3.8 содействовать продвижению продукции и услуг армянских организаций-резидентов СЭЗ;

3.9 создать специализированный, постоянно обновляемый сайт о СЭЗ;

3.10 осуществить проведение широкомасштабных акций по информированию общественности (PR-акции), в том числе в иностранных СМИ;

3.11 осуществлять другие мероприятия с целью международного признания СЭЗ и привлечения новых резидентов.

ներանում շահագործողների ներգրավմանը ուղղված այլ միջոցառումներ:

**Հոդված 7.**
**Պետական մարմինների գործունեությունը ԱՏԳ-ում**

1. ԱՏԳ-ում պետական ծառայությունները, բացառությամբ՝ մաքսային հայտարարագրերի ներկայացման և ընդունման, մատուցվում են մեկ պատուհանի սկզբունքով՝ միասնական ընդունարանի միջոցով՝ Կառավարության կողմից սահմանված կարգով:
2. Կազմակերպիչն անվճար տրամադրում է միասնական ընդունարանի համար տարածքը՝ առնվազն 50 քառակուսի մետր մակերեսով:
3. Կազմակերպիչը միասնական ընդունարանին ծառայությունները մատուցում է անվճար՝ բացառությամբ հեռախոսակապի ծառայությունների:
4. Կազմակերպիչն ապահովում է անհրաժեշտ պայմաններ միասնական ընդունարանի՝ ժամանակակից տեխնիկական սարքավորումներով հագեցվածությունը և դրա միացումը պետական ծառայություն մատուցող էլեկտրոնային կառավարման համակարգերին ապահովելու, ինչպես նաև այլ անհրաժեշտ պայմաններ միասնական

**Статья 7.**
**Деятельность государственных органов в СЭЗ**

1. За исключением подачи и принятия таможенных деклараций, все государственные услуги в СЭЗ предоставляются по принципу «одного окна» (посредством единой приёмной), согласно порядку, установленному Правительством.
2. Организатор бесплатно выделяет помещение для единой приёмной площадью не менее 50 кв.м.
3. Все услуги для единой приёмной, за исключением услуг телефонной связи, предоставляются Организатором бесплатно.
4. С целью обеспечения бесперебойной работы единой приёмной Организатор обязан создать необходимые условия для её работы, а именно: обеспечить оснащение единой приёмной современным техническим оборудованием, подключение к электронным системам управления по линии предоставления государственных услуг и наличие иных необходимых условий.

ընդունարանի անխափան գործունեությունն իրականացնելու համար:

5. Մաքսային մարմինների կողմից հսկողություն և մաքսային ձևակերպումներ իրականացնելու համար նախատեսված տարածքները Կազմակերպիչը տրամադրում է անվճար:

5. Помещения, предназначенные для осуществления таможенными органами таможенного контроля и таможенного оформления, предоставляются Организатором бесплатно.

**Հոդված 8.**
**Վնասների փոխհատուցումը**

1. Կազմակերպչի և Շահագործողի կողմից միմյանց պատճառած վնասները փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և իրենց միջև կնքված պայմանագրով:
2. Պայմանագրով և Գործարար ծրագրով նախատեսված պարտավորությունների սահմանված ժամկետներում չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպիչը պարտավորվում է 2 շաբաթվա ընթացքում Լիազոր մարմին ներկայացնել պարտավորությունների սահմանված ժամկետներում չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնավոր բացատրություն, ինչպես նաև Լիազոր մարմնի հետ համաձայնեցրած միջոցառումների պլան՝ պարտավորությունները կատարելու և թերությունները շտկելու վերաբերյալ:

**Статья 8.**
**Возмещение убытков**

1. Убытки, причинённые друг другу Организатором и Резидентом СЭЗ, возмещаются в соответствии с законодательством Республики Армения и заключённым между указанными сторонами договором.
2. В случае неисполнения или ненадлежащего исполнения обязанностей, определенных Договором и Бизнес планом, Организатор обязан в течение 2-х недель представить письменное обоснование неисполнения или ненадлежащего исполнения Уполномоченному органу, а также согласованный с Уполномоченным органом план мероприятий по выполнению обязательств и исправлению недостатков.

**Հոդված 9.**
**Շրջակա միջավայրի պահպանում**

1. Կազմակերպիչը պարտավոր է իրականացնել ԱՏԳ տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:
2. Կազմակերպիչը հետևում է Շահագործողների կողմից բնապահպանական նորմերի և պահանջների պահպանմանը:
3. Կազմակերպիչն անվճար հատկացնում է տարածք բնապահպանական նորմերի և պահանջների ապահովման նպատակով՝ անհրաժեշտ ստուգաչափիչ սարքավորումների տեղադրման համար:

**Статья 9.**
**Охрана окружающей среды**

1. Организатор обязан осуществить работы по благоустройству и озеленению СЭЗ.

2. Организатор должен следить за соблюдением Резидентами СЭЗ экологических норм и требований.

3. Организатором бесплатно предоставляется территория для установки контрольно-измерительного оборудования с целью контроля над соблюдением природоохранных норм и требований.

**Հոդված 10.**
**Հաշվետվողականություն և հսկողություն**

1. Կազմակերպչը Լիազոր մարմնին ներկայացնում է հաշվետվություններ ԱՏԳ-ի գործունեության վերաբերյալ՝ Կառավարության սահմանած կարգով և ձևով:

2. Լիազոր մարմինը իրականացնում է հսկողություն ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով Կազմակերպչի համար սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ:
3. Լիազոր մարմինը հսկողության իրականացման շրջանակներում

**Статья 10.**
**Отчетность и контроль**

1. Организатор представляет отчёты о деятельности СЭЗ Уполномоченному органу в порядке и форме, предусмотренными Правительством.
2. Уполномоченный орган осуществляет контроль над исполнением обязательств Организатора, установленных законодательством СЭЗ, Бизнес-планом и Договором.
3. В рамках осуществления контроля Уполномоченный орган получает от Организатора необходимую информацию и документы,

Կազմակերպչից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր ԱՏԳ օրենսդրության պահանջների, Գործարար ծրագրի և Պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ՝ գրավոր հարցման հիման վրա:

4. Լիազոր մարմինը գրավոր ծանուցում է Կազմակերպչին ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին՝ նշելով Կազմակերպչի կողմից բացատրություններ տալու և թերությունները վերացնելու ժամկետները:

5. Կազմակերպիչը պարտավոր է վերացնել Լիազոր մարմնի կողմից հսկողության իրականացման ընթացքում բացահայտված թերությունները՝ Լիազոր մարմնի հետ համաձայնեցված ժամկետներում:

6. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, որոնք կարող են անբարենպաստ անդրադառնալ Կողմերի պայմանագրային պարտավորությունների կատարման վրա:

касающиеся выполнения положений законодательства СЭЗ, Бизнес-плана и Договора на основании письменного запроса.

4. Уполномоченный орган письменно уведомляет Организатора о неисполнении или ненадлежащем исполнении обязательств, предусмотренных законодательством о СЭЗ, Бизнес- планом и Договором, указывая сроки, в течение которых Организатор должен представить соответствующие объяснения или устранить недостатки.
5. В сроки, согласованные с Уполномоченным органом, Организатор обязан устранить недостатки, выявленные в процессе контроля со стороны Уполномоченного органа.
6. Каждая из Сторон обязуется незамедлительно информировать другую Сторону о ставших известными ей обстоятельствах, которые могут неблагоприятно повлиять на выполнение ими договорных обязательств.

## Հոդված 11.

## Статья 11.

## Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, որոնք անհնարին են դարձնում ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Անհաղթահարելի ուժի ազդեցությունը դադարելուց հետո Կողմերը պետք է անհապաղ ձեռնամուխ լինեն ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը, որոնք դադարեցվել էին այդպիսի ազդեցության հետևանքով:

## Обстоятельства непреодолимой силы (ФОРС-МАЖОР)

Стороны освобождаются от ответственности за полное или частичное невыполнение своих обязательств, установленных законодательством СЭЗ, Бизнес планом и Договором, если невыполнение явилось следствием действия обстоятельств непреодолимой силы, которые возникли после заключения Договора и которые Стороны не могли предвидеть или предотвратить. К таким обстоятельствам относятся: землетрясение, наводнение, пожар, война, объявление военного и чрезвычайного положения, прекращение работы средств коммуникаций, делающие невозможными исполнение Сторонами своих обязательств согласно законодательству СЭЗ, Бизнес плану и Договору. По прекращении действия обстоятельств непреодолимой силы Стороны должны немедленно приступить к исполнению своих обязательств, установленных законодательством СЭЗ, Бизнес планом и Договором, которые были приостановлены вследствие влияния указанных обстоятельств.

## Հոդված 12. Եզրափակիչ դրույթներ

1. Կողմերը համաձայնվում են Պայմանագրի շուրջ ծագող տարաձայ-նությունները կարգավորել բանակցությունների միջոցով:

## Статья 12. Заключительные положения

1. Стороны соглашаются, что разногласия, возникающие в связи с Договором, будут урегулированы путём переговоров. В случае, если Стороны не

Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի կարգավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Պայմանագիրը կնքվում է 10 տարի ժամկետով:
4. Պայմանագրի գործողության ժամկետը չի գերազանցում Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված գործունեության ժամկետը:
5. Պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետի երկարաձգման դեպքում:
6. Լիազոր մարմինը և/կամ Կազմակերպիչը կարող է առաջարկել Կառավարությանը Պայմանագրում կատարել փոփոխություններ:
7. Պայմանագրի դրույթները խախտելը կամ չկատարելը հիմք է հանդիսանում Պայմանագիրը լուծելու համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում:
8. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
9. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի

смогут прийти к соглашению таким способом, урегулирование споров будет осуществляться в порядке, предусмотренном законодательством Республики Армения.

2. Договор вступает в силу с момента подписания.
3. Договор заключается сроком на 10 лет.
4. Срок действия Договора не должен превышать срок, закрепленный подпунктом 3 пункта 2 Постановления.
5. Срок действия Договора может быть продлён при продлении срока, предусмотренного подпунктом 3 пункта 2 Постановления.
6. Уполномоченный орган и/или Организатор может предложить Правительству внести изменения в Договор.
7. Невыполнение или нарушение положений Договора может являться основанием для его расторжения, в случаях, прямо предусмотренных законодательством Республики Армения.
8. Изменения и дополнения к Договору будут иметь юридическую силу лишь в случае, если они составлены в письменном виде и подписаны Сторонами.

9. Взаимоотношения, не урегулированные настоящим Договором, регулируются в

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Պայմանագիրը կնքված է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ 2 բնօրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

соответствии с законодательством Республики Армения.

10. Договор подписан на армянском и русском языках в 2 подлинных экземплярах, имеющих одинаковую юридическую силу.

**Կողմերի հասցեները և ստորագրությունները**

**Адреса и подписи Сторон**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

**Վահրամ Ավանեսյան**

Министерство экономики Республики Армения

Адрес: Республика Армения, г. Ереван, М. Мкртчяна 5

**Ваграм Аванесян**

«ՍԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

Հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հ.Հակոբյան 3

**Արմեն Խաչատրյան**

ЗАО «СИТРОНИКС АРМЕНИЯ»

Адрес: Республика Армения, г. Ереван, А. Акопяна 3

**Армен Хачатрян**

**Կազմկերպչի հիմնական ծառայությունների ցանկը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ բազայի վրա ստեղծված ԱՏԳ-ի շահագործողների համար**

| Ծառայության անվանումը | Արժեքը առավելագույնը՝ ԱՄՆ դոլարով (ԱԱՀ-ի հաշվառմամբ)* | Մեկնաբանություններ |
|---|---|---|
| Արտադրա-տնտեսական տարածքների վարձակալությամբ տրամադրում | Մինչև 10/քմ/ամս. | Կախված վարձակալվող տարածքի/հրապարակի չափից և վարձակալության ժամկետից՝ վարձակալության գինը կարող է ցածր լինել (պայմանագրային): Կազմկերպչի  կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ առավելագույնը ՀՀ-ում տարեկան գնաճին համապատասխան: |
| Գրասենյակային տարածքների վարձակալությամբ տրամադրում | Մինչև 10/քմ/ամս. | Կախված վարձակալվող տարածքի/հրապարակի ծավալից/չափից և վարձակալության ժամկետից վարձակալության գինը կարող է ցածր լինել (պայմանագրային): Կազմկերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ առավելագույնը ՀՀ-ում տարեկան գնաճին համապատասխան: |
| Ժամանակավոր պահպանության պահեստի վարձակալությամբ տրամադրում | Ըստ պայմանագրի/գործարքի | |

| Ծառայության անվանումը | Արժեքը առավելագույնը՝ ԱՄՆ դոլարով (ԱԱՀ-ի հաշվառմամբ)* | Մեկնաբանություններ |
|---|---|---|
| Ավտոկոնտեյներների հրապարակների (բաց հրապարակ) վարձակալությամբ տրամադրում | Մինչև 1,5/քմ/ամս. | Կազամկերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ առավելագույնը ՀՀ-ում տարեկան գնաճին համապատասխան: |
| Լոգիստիկ-պահեստային ծառայություններ.<br>- բեռների, կոնտեյներների ընդունման և բեռնաթափման հնարավորություն ավտոմոբիլային տրանսպորտի մեջ;<br>- ապրանքի հսկողության, հաշվառման և ներպահեստային տեղաշարժում;<br>- Բեռների մեկ տրանսպորտից մեկ այլ տրանսպորտ վերաբարձում: | Ըստ պայմանագրի/գործարքի | Այս ծառայությունների գնային քաղաքականությունը կորոշարկիացվի ԱՏԳ գործարկման սկզբին |
| Կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, ջուր, ջրահեռացում (կոյուղի), գազամատակարարում) | Ծառայության մատակարարների տարիֆներին համապատասխան | |
| Գերարագ ինտերնետ, հեռախոսաֆիկացում | Ծառայության մատակարարների տարիֆներին համապատասխան | |
| Տարածքի մաքրում և բարեկարգում | Ընդգրկված է վարձակալության գնի մեջ | |
| Տարածքի ընդհանուր մաքրում | Ըստ պայմանավորվածության | |
| Տարածքի շուրջօրյա պահպանություն | Ըընդգրկված է վարձակալության գնի մեջ | |

| Ծառայության անվանումը | Արժեքը առավելագույնը՝ ԱՄՆ դոլարով (ԱԱՀ-ի հաշվառմամբ)* | Մեկնաբանություններ |
|---|---|---|
| Ավտոկանգառ (պահպանվող) ԱՏԳ շահագործողների աշխատակիցների թեթև մեքենաների համար 1 մեքենատեղ (արտոնյալ տարիֆ) | Մինչև 20/ամիս | Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ առավելագույնը ՀՀ-ում տարեկան գնաճին համապատասխան: |
| Ավտոկանգառ (պահպանվող) հյուրերի թեթև մեքենաների համար 1 մեքենատեղ (ԱՏԳ տարածքի սահմաններից դուրս) | Մինչև 0,5/ժամ | Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ առավելագույնը ՀՀ-ում տարեկան գնաճին համապատասխան: |
| Վճարովի մուտք կոմերցիոն/առևտրային տրանսպորտի համար մեկ մեքենայի հաշվով | Մինչև 2/մեկանգամյա մուտքի համար | Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ առավելագույնը ՀՀ-ում տարեկան գնաճին համապատասխան: |
| Շահագործողների տրանսպորտի մուտքը (ինչպես սեփական, այնպես էլ պատվիրված) | Անվճար | |

**Կազմկերպչի հիմնական ծառայությունների ցանկը «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ բազայի վրա ստեղծված ԱՏԳ-ի շահագործողների համար**

